ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Քաջարան, Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-51

N 1558
03 դեկտեմբեր 2024թ.

ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Քաջարանի համայնքապետարանի և «Արմստրոյ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հոկտեմբերի 09-ին կնքվել է ՔՀ-ԳՀԽԾՁԲ-24/03-29 ծածկագրով «Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար՝ ***նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման եվ ծախսերի գնահատման***» ձեռքբերման պայմանագիր:

ՔՀ-ԳՀԽԾՁԲ-24/03-29 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցման վերջանժամկետը նախատեսվել էր սույն թվականի նոյեմբերի 01-ը: Հաշվի առնելով «Արմստրոյ» ՍՊ Ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի սույն թվականի հոկտեմբերի 23-ի No 499/24 գրությունը՝ 2024 թվականի նոյեմբերի 01-ին կնքվել է Համաձայնագիր՝ ըստ որի Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2024թ.-ի դեկտեմբերի 01-ը, սակայն Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը մինչ օրս չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.3 կետի ա) և բ) ենթակետերի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միպկողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ Քաջարանի համայնքապետարանը որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ***միակողմանի լուծել Պայմանագիրը***:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է ***պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը***, որը ***հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, ***պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:***

Եթե պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետով սահմանված կարգով՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը կհրապարակվի www.procurement.am կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսական, եկամուտների հաշվառման բաժնի պետ՝ Լ. Գեվորգյան
077886674